

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՄԵԼԻ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳԵՂԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Տարեկան գինը 10 ռուբլի կես տարվանը 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мелі»
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է չ է ֆ օ ն № 253.

Պարագրաֆները ըստ է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առաջ օրերից):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խորաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է չ է ֆ օ ն № 253.

Այդի տիրուհի Նատալիա, Ստեփանոս և Գեորգ Գուրմիստովները խնդրում են
խորին յարգանքով բարեկամներին և ծանօթներին շնորհ բերել, առաջինը իր սիրելի և
անմոռանալի ամուսնուհի, երկրորդը և երրորդը իրանց թանկագին և վաղամեծ հօր

ՄԿՐՏԻՉ ՔԱՀԱՆԱՅ ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՑԻ

բառաստօրեայ հոգեհանգիստը կատարելու, վաղը, կիրակի, ամսին 29-ին, հաւարարի
ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին ժամը 10-ին:

ԲՈՎԱՆԻՍՏԻԿՈՒԹՅՈՒՆ

Վերջին տեղեկութիւններ. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ. Պարսից Շահի ճանապարհորդութիւնը. Կոտորածի և թալանի չափը. Նամակ Հին-Նախիջևանից. Նամակ Պետերբուրգից. Նամակ Անդրկասպեան երկրից. Նամակ Նախապետութեան. Ներքին լուրեր. — ՀԵՐԱՅԻՐԱՆԻՍ. — ՅԱՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ:

ՎԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

Նախիջևանի սոսկալի գէպերը բացի
այն, որ վերջին տեղեկութիւններն են իրանց չափազանց հաճելի և կործանիչ բնուորութեամբ, կրում էին իրանց մէջ մի վերին աստիճանի ծանր և վճատութեան հասցնող բարոյական այլադասութիւն. Դա այն է, որ նրանք տեղի ունեցան մեր, հայերի և թուրքերի, եղբայրական հաւաստիարկումներից, համեմատելիության երգումներից, սրտակից հարեանութեան ողբաբանումներից յետոյ:

Ուրի տակ էին տրված մասնակցութեան և համաքաղաքացիութեան սրբազան գաղափարները, արհամարհված և անարգված էր եղբայրութեան այն սուրբ ոգևորութիւնը, որ առաջ էր եկել մոռացնել տալու Բագուի դժոխային աղետի ծանր և անկարելի դարձնելու նրա նման զբաղողութիւնների կրկնութիւնը:

Նա հասկանալի է թէ ինչու մեր բոլոր բերանները պապանձվելին: Սարսափելի իրականութիւնը տրորում և ջարդում էր ամեն մի լուսաւոր բան: Եղբայրութեան գաղափարի պատասխանը սուրն էր և հրացանը, համեմատելիության քարոզին հրդեհը, կողպատը և աւերումները:

Ինչու էր այդ բոլորը կատարվում: Ինչու էր դրդում կազմակերպելու այդ պապանձումը և ասպատակութիւնները:

Այդ հարցերի պատասխանը գեռ չէ դառնում:

Բայց ծանր իրականութիւնը նոր, տըխուր և սոսկալի տեսարաններ առաջ բերեց: Նախիջևանի շրջակայից աղէտը տարածվեց հեռաւոր գիւղերը և յանկարծ բռնկվեց Երևան քաղաքում, տալով երկու օրվայ մէջ բազմաթիւ մարդկային զոհեր, որոնց թիւը հարիւրից անցնում է:

— Այդպէս չէ կարող շարունակվել, առում են և աղաղակում բոլորը: Պէտք է վերջ դնել:

Այդպէս է վերջ դնել: Պէտք է աղէտի տարածման առաջն առնել և ազատել մեր երկիրը կործանումից:

Հայեր և թուրքեր Թիֆլիսում մի քանի փորձեր արին միմեանց հետ տեսնելու, խորհրդակցելու իրենց գրութեան մասին և մշակելու միջոցներ մաքառելու աղէտի դէմ:

Պարսկաստանի հայ և թուրք ներկայացուցիչները նոյնպէս երկիւղ կրելով աղէտի տարածման ուղեւորակից, միջոցներ են որոնում զբաղողութիւնների առաջն առնելու:

Էին բռնում պարսկահայտակներ, որոշում կայացրին օգտվել պարսից Շահի գալատով և խնդրել, որ նա թէ իր արքայական հեղինակութեամբ և թէ Նէշաֆի ու Քեհաբալայի կրօնապետների աջակցութեամբ ազդէ մուսուլմանական ամբարի վրա, հասկացնելով նրան, որ նա պէտք է հաշտ և համեմատելու ապրէ հայերի հետ: Այդ իմաստով մի հեռագիր ուղարկվեց Հաջի-Կաբուլ յատուկ անձի միջոցով Շահին գեղեցնանելու:

Հայոց հոգևորականութեան կողմից պէտք է Շահին ներկայանան Շամախու թեմի առաջնորդը և Բագուի յաջորդը, խնդրելու նրա հովանաւորութիւնը պարսկահայտակ հայերի վրա:

Թուրքերի և հայերի ազդեցիկ ներկայացուցիչներ որոշել են այս օրերս միմեանց հետ միասին խորհրդակցել իրական միջոցներ ձեռք առնելու կոտորածներին վերջ տալու մեր երկրում:

Իրականութիւնը չափազանց կորստաբեր եղաւ երկու կողմերի համար: Նախապետութեան ցանկութիւնը դառնում է ընդհանուր:

Թիֆլիսի առաջնորդ Գարեգին եպ. Սաթուհեանը մայիսի 25-ին ուղարկել է Գանձակ ամենազին և անկարելի կրօնաւոր Սխուրճ Սաթուհեան ֆիշմամազ զադէին հետեւալ հեռագիրը:

«Սաւար ոյժերի ջանքերը արդիւններ ունեցան, առաջացնելով արհեստագործութիւն, հրդեհ և կողոպուտ Կովկասի խուսնիւններից մէկում, Նախիջևանում և նրա գաւառում, որտեղ դարձաւ խաղաղ հարեանները թաթախեցին իրանց ձեռքերը եղբայրական արիւնի մէջ, ինչպէս Բագուում: Յայտնելով Ձեզ իմ անկեղծ շնորհակալութիւնս Ձեր ջանքերի համար առաջն առնելու նրա դէպքերի կրկնութեան Գանձակում և նրա շրջակայքում, ջերմակին խնդրում եմ Ձեզ չը մերժել պահպանելու եղբայրական յարաբերութիւններ մահմեդականների և հայերի մէջ: Այդ գործին կաջակցէ Ձեզ և հայոց հոգևորականութիւնը, որին տրված է իմ կողմից համապատասխան ցուցում»:

Ստացանք հետեւալ հեռագիրը պ. Օրէստ Սեօմիցի:

Երևան, 26 մայիսի 6 ժ. 15 ր. երեկ.

Չորրորդ օրն է քաղաքում ամբողջ կեանքը դադարել է: Ժամ առ ժամ սպասում են կոտորածի վերսկսվելուն: Սով է: Միս չը կայ: Հացի ֆունտը 10 կոպեկ է: Առաջին ընդհանուր տեղի է ունեցել բազարում, մայիսի 23-ին: Այդտեղից կոտորածը տարածվել է քաղաքի ծայրերում, շարունակվելով մինչև 25-ի կէսօրը, երբ Աստաֆեան փողոցի մօտ մի փողոցիկում մի թուրքի տան մէջ, պատնէշներով շրջապատված, ոռւմբ են նետել, որից սպանվել են 8-ից աւելի մարդ: Բերանացի յայտարարված է գիւղաւորական դրութիւն: Հրացանաձուլութիւնը դադարել է: Ազգաբնակչութիւնը սարսափած մեկնում է: Հիւանդանոց տարված են 38 վիրաւոր, 4-ը ծանր. մեռել են 5 հայ, 27 թուրք, 9 հրէա, 1 ոռւս, 1 կազակ: Գնդակահար են արել մի կառապանի, մէկին էլ վիրաւորել: Սպանվածների թիւը 50-ից անցնում է: Տիգրանեանի

այգում մորթել են այգեպանի ընտանիքը: Սպանութեան ձեռք և հանգամանքները բոլորովին նոյնն են, ինչ որ Բագուում: Սակայն հայերն աւելի ուժեղ են, որի շնորհիւ, հաւանօրէն, կոտորածը կը դադարէ:

Սաղաղացնող յանձնաժողովի ջանքերն ապարդիւն են: Քաղաքը բաժանվել է երկու զինված բանակների:

Հայերի մօտ մի քանի խուզարկութիւններ են արված:

Ձերբակալված են հրդեհածիգները և կողոպուտիները առաջնորդ թուրքերը:

Ղաւարու գիւղում հրացանաձուլութիւն է:

Կոտորածը բռնել է Նախիջևանի, Երևանի, Դարպազեայի գաւառները:

Մասիսի վրայից իջել են քիւրդերը, որոնք յարձակվել են Զուլֆայի երկաթուղու վրա: Նրանց դէմ ուղարկված է երկու վաշտ զօրք:

Սեօմից

Երևանից Թիֆլիսի առաջնորդին մայիսի 25-ին 3 ժամ 50 րոպէին հեռագրված է հետեւալը:

«Երէկ սկսվեց ժամի 12-ից հրացանաձուլութիւն, որ վերջացաւ այսօր ժամի 10-ին: Ձոհերի թիւը յայտնի չէ: Փակված են բոլոր խանութները: Հայերը իրանց բնակարաններում են, մահմեդականները իրանց: Քաղաքի մէջ անցուղարձ են անում պահակախմբերը»:

Գարեգին վարդապետ

Երևան, 25 մայիսի, 6 ժ. 15 ր. երեկ.

Երէկ ցերեկվայ 12 ժամին նորից հրաձուլութիւն սկսվեց քաղաքում, որը գիւղերը աւելի սաստկացաւ և անընդհատ շարունակվեց մինչև այսօր առաւօտը: Թուրքերը շախատում էին կրակ տալ շուկան: Առաւօտը ոռւմբեր են նետվել: Վիրաւորվածներ և սպանվածներ շատ են: Քաղաքում կեանքը մեռել է: Դրութիւնը ճնշող է: Շատերը թողնում են քաղաքը: Այսօր շնորհիւ կառավարութեան եռանդուն միջոցներին, կարգը վերականգնում է:

Կանդուրախան

Երևան, 25 մայիսի, 6 ժ. 53 ր. երեկ.

Հրաձուլութիւնը շարունակվում էր մինչև կէսօր: Ձիւնորակաւ վարչութեան կողմից խիստ միջոցներ են ձեռք առնված: Առ այժմ հանգիստ է: Անկարգութիւնների սկզբից մինչև այժմ հայեր սպանված են 10-ը, վիրաւորված են 20. Թուրքեր սպանված են 100-ից աւել, վիրաւորվածներ շատ են:

Ռուբեն

«ՌԱԵԱՅԵ»-ին հեռագրում են Երևանից մայիսի 25-ին.

«Երէկ ցերեկն ու գիշերը քաղաքում հրաձուլութիւն էր: Երկու անգամ փորձ արին բազարը հրդեհելու, բայց իր ժամանակին առաջն առնվեց: Այսօր հայերը 2 ոռւմբ են նետեցին մի մահմեդականի տուն, փասեցին շէնքին, ներս խուժեցին և սպանեցին 10 մահմեդական, այդ, կին և երեխայ: Ծանր վիրաւորեցին 3 հոգու: Կողոպուտեցին, իսկ երբ կազակները եկան, փախան: Սպանված է մի ստրաժնիկ: Նահանգապետը, բոլոր միջոցներն սպառելով, կարգը վերականգնելու գործը յանձնեց զօրքերի գլխաւոր զինեալ Շվիգովին:

Երևանի մեր թղթակից Ա. Դ. իր հաղորդագրութեան մէջ, որ յանձնել է պատին մայիսի 24-ի երեկոյեան ժամը 9-ին, տալիս է հետեւի:

տեղի Զոր տեղեկութիւնները Երևանի խառնակութիւնների մասին.

«Գիշերը անցաւ լուռ և խաղաղ: Հետեւալ օրը առաւօտը հայերը խանգարում էին պոլիցիայի զինացի հրապարակը և Աստաֆեան փողոցը: Երէկվայ թուրքերի վարժուները առաջ էր բերել բռնու գայլթի, բայց երկու զոհերը, հիւանդանոցը լցված էր հայ վիրաւորներով:

Այդ ժամանակ լուր բերին, որ մի շարք խանութների վրա թուրքերն բռնեցին գրված և ստուգվեց, որ յիշաւ մի քանի հայերին պատկանող խանութների զոհերի վրա արված են նշաններ:

Մի կամ երկու ժամից յետոյ էլ լուր հասաւ, որ քաղաքապետը մի քանի թուրքեր փորձ արեցին մի յայտնի մեծ խանութ հրդեհել և ահա այս բոլորը աւելի և աւելի զրգռում էին խանգարած ժողովրդին:

Այսպէս շարունակվեց մինչև ժամը 10 և կէսը: Շուկան ամբողջապէս փակ էր: Այդ օրվային պայթեց մի աւերանալ: Այդ պայթեցի վրա իրարանցում առաջացաւ, կարծէք նախորդ օրվայ դէպքերից խորը խորձանքներ կողոպուտներ ցնցվեցին, և հարկերի չափ մարդ սրացան այս և այն կողմ, մի խումբ գիւմեց Ելէյի քաղաքապետի մի դպրախանայի լուսամուտների վրա, որտեղից երկացող թուրքերը աւերանալ արձակեցին:

Մի երկու վայրկեան սոսկալի բան էր կատարվում. երկար տարածութեան վրա անթիւ աւերանալներից մի ժամանակ լսվում էին պայթեցներ: Պայթեցները աստիճանաբար արձագանք տուցին քաղաքի բոլոր մասերից, հրացանաձուլութիւնը ընդհանուր դարձաւ, պայթեցներ լսվում էին և փողոցներից և հրապարակներից, և աներից բազերից, սենեակների պատուհաններից ու պարտէզներից:

Օրվայ ընթացքում մասային հրաձուլութիւն տարձանակներից տեղի ունեցան նաև մի երկու տեղերում — Դուբերնակայա փողոցում:

Իսկ հրացանաձուլութիւնը քաղաքի բոլոր ծայրերից շարունակվում էր ամբողջ օրը, միայն փոքր ընդմիջումներից յետոյ: Գնդակները սուրում էին ամեն ուղղութեամբ, շատ լուսամուտներ ծակված էին, շատ տեղերում նկատելի են պատերի վրա գնդակների հարուածների հետքերը:

Քաղաքում սպանվածների և վիրաւորվածների թիւը հաշիւ առնելու հնարաւորութիւն չը կայ, մանաւանդ որ թուրքերը հիւանդանոց չեն բերում իրանց վիրաւորներին և ոչ էլ բոլոր սպանվածներին պոլիցիա: Հայերի և թուրքերի թաղերի մէջ եղած յարաբերութիւնը միանգամայն ընդհատված է:

Երեկոյեան ժամը 7-ին մի լաւ անձրև տեղաց և օդը մաքրվեց, բայց միևնոյն ժամանակ տեղի տվեց մի մթաղանձ ու խորունկ գիշերի, որպիսին լինում է աւերակների մէջ:

Քաղաքապետը 9-ից յետոյ փողոցներում ոչ ոք չէր ելալ, հակառակ դէպքում գնդակահար կը լինի:

Չը նայած այդ կաղաքութեան, այժմ, այս տողերը գրելիս, ժամը 10-ին, մի ժամի չափ լուռութիւնից յետոյ, սկսվել է մի սոսկալի հրացանաձուլութիւն քաղաքի բոլոր ծայրերից: Կարծէք անց ենք կացնում մի ուժեղ կուրի ամենատար վարկեանները: Մոռացալ յիշել, որ քաղաքի մէջ չըլում են հետեւի զօրքեր, սրանցից մի մասն էլ գրված է խանութների պահպանութեան վրա հսկելու, չըլում են նաև ստրաժնիկների և կողակների պատուները:

Մայիսի 25-ին երեկոյեան ժամը 9-ը.

Գիշերը անցաւ ոչ խաղաղ, մի քանի

անգամ տեղի ունեցան տաք հրացանա-
ձգութիւններ, որոնք տեւում էին 15—20
րոպէից աւելի: Քաղաքի բոլոր կողմերից
լավում էին որոտներ:

Շուկան փակ է արատսովոր միապա-
ղաղութեամբ, դատարկ ու մեռած փո-
ղոցները լցվում են հայերով. ոչ մի թուրք
նկատելի չէ և ոչ մի տեղ, մի օր ու գի-
շերով այն անընդհատ հրացանաձգութիւննե-
րից յետոյ թուրքերը փակվել էին իրանց
մասերում և մի քանի դիրքերից անընդ-
հատ արձակում էին հրացաններ, որոնց
պատասխանում էին հայերը հանդիպա-
կաց դիրքերից: Հրացանաձգութիւնը թէև
ոչ նախորդ օրվայ պէս եռանդաւոր, բայց
և այնպէս մի քանի տեղերում անընդ-
հատ պայթեցներով շարունակվում էր
մինչև ցերեկվայ ժամը 11-ը:

Այսօրվայ տեղի ունեցած դէպքերից
ստիպված ենք յիշել մի քանիսը, որոնք
յատուկ են սոփեւոր, խաւար և միանգա-
մայն անկուտուրական ժողովուրդներին:

Մասնակի սպանութիւններ այս և այն
տեղում, այս և այն անկիւնում շարու-
նակվում են: Շահար կոչված թաղում,
որ մի յայտնի տեղ ապրում են հայեր և
թուրքեր խառը, տեղի ունէր մի երկու
կէտերում հակառակ դիրքերից հրացա-
նաձգութիւն. մի տեղ հայերը յարձա-
կում գործելով դիրքի վրայ, մինչև ան-
գամ կուռել են սրբով: Սկսւմ տեղում
ձգված է մի, ինչպէս հաստատում են,
ռուսներ, այդ երկու կէտերից գտնված են
18 դիակ և 3 վիրաւոր: Նոյն այդ թա-
ղում հայերը թալանել են երկու թէ ե-
րեք թուրքի տներ. այո, ընթերցող, հայը
թալանել է թուրքի տուն. օրը ցերեկով
մարդիկ մտել են և համարեալ, բայց աշ-
կարա, աւագակի պէս շալակել են դռացի
թուրքի սեփականութիւնը, տան իրերը,
անկողին ու փայտները, կշիռն ու թախ-
տը, թուխս նստած հաւը իր նոր ելած
ձուռեղով և նոյն իսկ խորովածի շամ-
փուրները և մեծ Աստաֆեան փողոցը
կտրել ու անցել են: Այս լուրը կայծակի
արագութեամբ պատելով բերանէ բերան,
զգուսնքի, զայրոյթի թոյն էր առաջաց-
նում իւրաքանչիւր հայի երեսի վրա:
«Պէտք է հետեւել, պէտք է գոնե՛լ այդ
աւագակներին և յափշտակած իրերը յետ
խել և վերադարձնել տէրերին», այս էր
այն առաջին խօսքերը, որ արտասանում
էր իւրաքանչիւր հայ թալանի մասին
լսելիս:

Ցերեկվայ ժամը 11—12-ին դադարեց
հրացանաձգութիւնը և քաղաքի վրայ,
կարճէք, իշու հանգստի քողը:

Երկու օր թուրքերը պաշարված մնա-
լով իրանց տներում և բաւականին նեղ-
վելով պաշարի պակասութիւնից՝ դիմել
էին նահանգապետին հաշտութիւն կա-
յացնելու համար: Որքան լսեցինք, խա-
ներից մէկը նոյն իսկ նամակով դիմել էր
գործերի հրամանատար զեմետայ Նվեդո-
վին, ինքնուրոյ խաղաղացնել հայերին,
խոստանալով որպիսի երաշխաւորութիւն
որ պահանջներ լինեն: Գեներալ Նվեդով,
որին և յանձնված է քաղաքի կարգապա-
հութիւնը, յայտարարեց խիստ միջոցներ,
եթէ կը շարունակվեն հրացանաձգու-
թիւնները, և պայթեցները աստիճանա-
բար լռեցին: Ինչ վերաբերում է հաշ-
տութեան խնդրին. «մենք չենք հաւատում
հաշտութեան ձևական պրօցեսին, այդ
ձևի առաջին հաշտութիւնից յետոյ ա-
ռաջին նախադրեալը դարձեալ թուր-
քերը եղան», ահա այն պատասխանը, որ
կը լսէք իւրաքանչիւր հայից հաշտու-
թեան առաջարկի առիթով:

Գետքից յետոյ առանձին դէպքեր տե-
ղի չունեցան. դարձեալ ոչ մի թուրք չէ
երևում. եթէ պատահում են էլ, այն էլ
խմբով 20—30 և էլի աւելի հոգուց բաղ-
կացած, գլխաւորապէս կանայք և երե-
խաներ. սրանք զինուորների հսկողու-
թեամբ հայերի հետ խառն մասերից
տեղափոխվում են թրքական թաղը:

Երէկվայ ու այսօրվայ սպանվածների
թիւը մի քանի տասնեակներից անց է,
թէև ճիշտ թիւը դեռ չէ պարզված:

Հայերից այսօր սպանվածներ կան 3-ը
և մի քանի էլ վիրաւորներ. ասում են,
որ մի երկու հայեր էլ սպանված են
այգիների մէջ:

Բոլոր նշաններից երևում է, որ խա-

նութները երեք օր անընդհատ փակ
մնալուց յետոյ, կարող են դեռ էլի մի
երկու օր փակ մնալ: Բանկերը բոլորը
նոյնպէս փակ են:

Երէկ լուր տարածվեց, որ իբր 15 վերստ
հեռաւորութիւն ունեցող Աղամալու
գիւղում հայերի ու թուրքերի մէջ ընդ-
հայրում է տեղի ունեցել, ինչպէս և Աա-
մարու գիւղում, բայց այդ լուրերը բա-
րեալաբար չը ստուգվեցին: Ամար-
ուցի մի գիւղացի պատմում էր, որ երե-
ւանի ընդհարման լուրը երբ հասաւ Աա-
մարու, թուրքերը առիթներ էին սար-
քում ընդհարվելու, բայց երբ յայտնե-
րը քաղաքից լուր հասաւ, որ հայերը
թուրքերին չարեցին, մեր գիւղի փոսն-
դը անցաւ, մի քանի «չուլուլներ» զըս-
պվեցին:

Յոյս կայ Երևանի դէպքը դաւաճների
վրա խաղաղութիւն տարածէ:

Ա—Դ

Երևանի երկաթուղային կայարանից ստա-
ցանք հետեւալ օրագրական կարգով տեղեկու-
թիւնները մի անգամ:

Երևանի կայարանը, մայիսի 24-ին:
«Սպանվածների և վիրաւորների թիւը
100-ի չափ է համարվում: Բոլոր խա-
նութները փակ են: Ամբողջ գիշերը սա-
տիկ հրացանաձգութիւն էր կուռղ կող-
մերի միջև: Զօրը շատ քիչ է. բոլորը
գնացել են Նախիջևան: Խառնակութիւննե-
րը տարածվել են բոլոր գաւառներում: Այս
առաւօտ Ուլուխանլու կայարանից հեռա-
գիր է ստացվել, որ այնտեղ են գալիս
բաշարի թուրքեր, որոնց մի մասը հա-
ւանդէն կը գնան Երևան: Ընդհանրա-
պէս դրութիւնը շատ լուրջ է: Երկաթու-
ղու կայարանը լիք է բաղադրի փակցող
ձառնորդներով: Կայարանի գլխաւորը հե-
ռագիր է ստել, որ յետ պահին Երևանի
կողմի ուղարկվող բոլոր բեռները, որով-
հետեւ կայարանում տեղ չը կայ:

Հրաձգութիւնը կատարվում է գլխա-
ւորապէս պատուհաններից և տները տա-
նիքներից և բոլորովին աննպատակ:
Ինչպէս վրա կտրվում են, կարծես
միայն նրա համար, որ գոնե՛ր թիւն ա-
ւելանայ, առանց ջնջելու թէ ով է,
մինչև իսկ երեսներին չը խնայելով:
Սկսւմ րօպէ սպասում են քիւրդերին:

Մայիսի 24-ին Ուլուխանլու կայարանի
բանաւորները յայտնել են կայարանի գլ-
խաւորին, որ որովհետեւ յամալ լուրեր
են պտտում, որ թուրքերը յարձակվելու
են Ուլուխանլու կայարանի վրա, այդ
պատճառով բանաւորները չեն կարող աշ-
խատել և խնդրում են իրանց արձակել:

Ասում են, որ մի քանի հարիւր զին-
ված թուրքեր մայիսի 25-ի առաւօտեան
Ուլուխանլու մօտով անցկացան դէպի
Երևան, բայց տեղական ազդեցիկ թուր-
քերը նրանց յետ պահեցին:

Կոյս 25-ի ամբողջ գիշերը Երևանում
սաստիկ հրաձգութիւն էր: Հնար չը կայ
իմանալ հետևանքները:

25-ի առաւօտեան ժամը 6-ին, մի
թուրքի տան ռումբ են նետել. սպանված
է 8 հոգի, վիրաւորված 2: Դրութիւնը
կրիթական է: Այս րօպէս հեռագիր
ստացվեց, որ գանապան գիւղերից ահա-
գին թուով գինված թուրքեր գնում են
Ուլուխանլու վրայով Կարահամզա: Այդ
մասին երկաթուղու կայարանի գլխաւորը
հաղորդեց նահանգապետին և գործերը
գլխաւորին:

Նորաշէն կայարանից այսօր, 25-ին,
հաղորդում են, որ այս գիշեր Արփաշայի
կամուրջը փչացել է, գնացքների շար-
ժումը դադարում է: Վերաշինութիւնը
պահանջվում է 10 օր:

Մայիսի 25-ի երեկոյից քաղաքում դա-
դարեց հրաձգութիւնը, բայց դեռ ևս
կայարանի հետ յարաբերութիւն չը կայ:

Երէկ (25-ին) քաղաքը հրատարակված
է զինուորական դրութեան մէջ և հրա-
մանատարութիւնն իր վրա առաւ դեռնե-
րալ Նվեդովը:

Երէկ (25-ին) կազակներն սպանեցին
մի թուրքի, որը կրակ էր անում հայերի
վրա և չէր ուղում դէպքը յանձնել: Սպա-
նեցին նոյնպէս և մի հայի, որը դիմա-
դրութիւն էր ցոյց տալիս: Հաւանորէն
դա ազդեց փոխադարձ սպանութիւն-
ների նուազելու վրա:

Այսօր, մայիսի 26-ին, առ այժմ

հանգիստ է: Բայց այս րօպէս
Ջուլֆայի գծի աշխատանքների գլխա-
ւորին և նահանգապետին հեռագիր ե-
կաւ, Ամարուից, որ այնտեղ սկս-
վեց հրաձգութիւն և բոլոր հա-
յերը փախան Ջուլֆայի գծի կայարանը:

Ամարուից ինժեներ Տրեկինսկին հե-
ռագրում է, որ ինքը Ամարու կայա-
րանում ունի միայն 6 զինուոր, որոնք
երբեմն-երբեմն պտտուի են ելնում: Ապ-
րանքների բաղը փոսնդի մէջ է, ուր
բեռները բաց պլատֆորմի վրա են, իսկ
պահապանները միայն 5 հոգի են, որոնք
պահպանում են գլխաւորապէս պահեստի
դուռը, որովհետեւ նա շատ հին է և չէ
փակվում:

Ամարուում հրացանաձգութիւնը դեռ
շարունակվում է այսօր, մայիսի 26-ին:

Նախիջևան, մայիսի 23-ին.
Գիւղերում դեռ ևս յարձակում-
ները չեն վերջացել: Այսօր հէնց ի-
մաց տուին իշխանութեան, որ Ջիւան-
չիլի կողմերից ահագին քանակութեամբ
ձիւար և զինված թուրքերը շրջապա-
տում են հայաբնակ Կազանչի գիւղը,
որը ամբողջ մի շաբաթվայ ընթաց-
քում կուռել է տեղական թուրք գիւղե-
րի հետ, իսկ այժմ էլ դրանց վրա ա-
ւելացել են Ջիւանչիլի կատարի թուրքե-
րը: Նախիջևանից զօրք Կազանչի հասաւ:
Վերջին ընդհարումների հետևանքը դեռ
ևս յայտնի չէ: Պատմում են, որ բաւա-
կանին քանակութիւնով թուրքեր են
սպանվել Կազանչի և Ջիւանչիլի հայ դիւ-
ղերում: Գեներալ Ալեքսանովի մասին
ասում են, որ նա շատ անպառ մարդ
է: Ելնու-ու-խանլու Օրդուբաթ է ու-
ղեւորվել: Վնասվածներ և բաւակա-
նին սպանվածներ կան հայերից և
Դոլթանի գիւղերում (Ալլահում, Նասր-
վասում, Փառակում և այլն): Դեռ ևս
կողոպտված աղանդները չեն գտնված
և ոչ էլ խուզարկութիւններ եղան: Գիւ-
ղերում բռնաբարված և փախցրած են
շատ հայ կանայք և աղջիկներ: Գիւղե-
րում սպանվածների դիակները դեռ ևս
ընկած են փողոցներում: Թուրքերը սպառ-
նում են հայերին, որ չը համարձակվեն
իրանց անունները իշխանութեան տալ:
Հակառակ դէպքում... սկսվեց կործանիչ
գաղթականութիւնը. օրէնք մի քանի ֆու-
զօններ դուրս են գալիս:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՏԻՑ ԵԱՆԻ ԶԱՆԱՊԱՐԱՆՈՒԹԻՒՆԸ

Նամակ ռուս-պարսկական սահմանագլխից

Աստարա, մայիսի 23-ին

Մի շաբաթից աւելի էր, որ Աստարայում,
պարսից և ռուսաց սահմանագլուխը կազմող
այս ծովափնայ քաղաքում, թէ պարսից և թէ
ռուսաց մասերում եռանդուն կերպով պա-
րաստութիւններ էին տեսնում: Պարսկաստանի
Շահնշահին ընդունելու համարվաղաքի երկու
կողմերն էլ՝ զարգարված դրօշակներով ու կա-
մարներով արտակարգ կերպով փոխել էին
իրանց մաշկ տեսքը, տոնական հանդիսաւո-
րութիւն էր թաղաւորում մանաւանդ քաղաքի
ռուսական մասում, ուր ամենքը աշխատում
էին որքան կարելի է շքեղ կերպով զարդարել
իրանց բնակարանները պարսից արև-առեւծի
և ռուսաց երեգունների դրօշակներով:

Մի միջթարական երկուց կարելի է համա-
րել ներկայ տխուր ժամանակներում այն, որ
երբ ռուսաց Աստարայում գտնվող հայերը ու-
ղում էին իրանց կողմից կամար կառուցանել,
նրա առկին իրանց աղ ու հացը մատուցանելու
համար Շահին, տեղական թուրքերն էլ, մի
կողմ թողնելով ուրիշ տեղերում այս երկու
կողմից—ազգերի մէջ ծագած թուրքամարտ-
թեան արդեւն եղող արեւնոտ թշնամանքը,
յօժար ցանկութիւն յայտնեցին մասնակցելու
հայոց կառուցանելի կամարին և այդպէս միա-
ցած, միասին զբին երկու կամարներ, և էլ,
հէնց Շահնշահի գալստեան պատճառով սահմա-
նը բաժանող փոքրիկ գետակի վրա նոր կա-
ռուցված կամարն սահմանը կոխելու տեղում,
իսկ միւսը ռուսաց մաշխատանքի մասնա-
փառաւոր կերպով զարդարված: Մի կամարն
էլ դրված էր յիշեալ նորաշէն կամարին միւս
ծայրին պարսից մաշխատանքի կողմից:

Նախ քան Շահնշահի Աստարա հասնելը, ամ-
սին 20-ին այստեղ ժամանեցին նրան դիմա-
ւորելու և ընդունելու համար Պետերբուրգից՝

Կայսրի կողմից առաքված մեծ իշխանը իր
աղիւտանաներով, Թիֆլիսից՝ փոխարքայի
կողմից պ. Կոխանովսկին, Բագուի փոխ-
նահանգապետը և շատ աստիճանաւորներ ու
120 հոգուց բաղկացած Սալխանից զինուորա-
կան խումբը: Մեծ իշխանի հետ եկաւ նաև
Պետերբուրգի պարսից դեսպանը:

Ամսին 21-ին, շաբաթ օրը առաւօտեան իր
ոչ շատ մեծ սվիտայով շրջապատված ժամա-
նեց նորին մեծութիւն Շահնշահը պարսից Աս-
տարա, ուր իշխանեց պարսից թաշիր-բաշիր
տանը. այդ ու կիրակի օրերը հանգստանա-
լուց և ընդունելութիւններից յետոյ, այսօր,
երկուշաբթի առաւօտեան ժամը 10-ին, ուղեկ-
ցութեամբ բարձրաստիճան անձանց, անցաւ
նա ռուսաց կողմը, որտեղ ընդունելութիւնը
եղաւ շատ փառաւոր. բոլոր զինուորականու-
թիւնն ու ամբխը, ռուս, հայ, թուրք, հրէայ,
մօտ 4—5000 հոգի հաւաքված ամեն կողմե-
րից, խնկած գետափում տարածվող դաշտի
վրա ամենախորին յարգանքներով ընդունե-
ցին նրան: Լաւ տպաւորութիւն էր թողնում
զինուորական երկու կողմի երաժշտութիւ-
նը. երբ Շահն անցաւ ռուսաց հողի վրա,
երաժշտութեան հետ միասին թնդացին
և նաւահանգստում կանգնած երկու պա-
տերադական նաւերի թնդանթաձգութիւն-
ները: Սահմանի վրա պատշաճաւոր ձե-
ւականութիւններից յետոյ կառքերի խումբը
տարաւ Շահին նախօրը նրա մի երկու ժամ-
վայ հանգստութեան համար պատրաստած
են իւ. իւրիկներին տունը, որտեղ էլ մի քանի
հոգի հայերից, Աստարայի հայ հասարակու-
թեան կողմից մատուցին նրան աղ ու հաց
արծաթէ մատուցարանում, որի վրա յատկա-
պէս փորագրվել էր արև-առեւծի շքանշանը և
հայերէն ու թուրքերէն հետեւալ գրութիւնը.
«Նորին մեծութիւնն արեգակնափայլ Շահնշահ
Մուղաֆֆէր-է-Էլլէին Շահին Աստարաբնակ ե-
րախաղաղ հայերի կողմից. 1905 թ. մայիսի
22-ին» և այդ մատուցարանը՝ Շահնշահը իր
սեփական ձեռքով աղն ու հացը շոշափելուց
յետոյ՝ հրամայեց իր թիկնապահներին վերց-
նել հայերի ցանկութեան համաձայն իբրեւ յի-
տաւակ:

Պ. Խաչիկեանի տանը հանգստանալով մօտ
երկու ժամ և ճաշելով, Շահն ճանապարհվեց
դէպի Լէնքորան ցամաքային ճանապարհով,
ուղեկցութեամբ բոլոր զինուորական ներկայա-
ցուցիչների: Լէնքորանից նա կը գնայ մինչև
Հաջի-Կաբուլի երկաթուղու կայարանը, որտե-
ղից էլ ուղղակի կը ճանապարհվէ արտասա-
ման, առանց կանգ առնելու ռուսական քաղաք-
ներում:

Ձը մոռանաւ յիշել, որ նորին Արեգակնա-
փայլութեան ներկայացող հայերը արժանա-
ցան նրա կողմից ոսկեայ և արծաթէ մեդալ-
ներ: Հայը միշտ եղել է սիրված ժողովուրդ
և հաւատարմորէ հպատակ պարսից տէրութեան
ու նրա ողորմած Շահնշահին—և վայելել է
միշտ նրա զթաւառ հովանին. յուսանք որ
այսուհետեւ էլ նորին Արեգակնափայլ Մեծու-
թիւնը, մանաւանդ ներկայ տխուր րօպէսներում
է իր բացակայութեան ժամանակ հեռուից էլ
իր զթաւառ հայեացքը չի հեռացնի իր այս
սիրելի և երախտալէս հպատակների վրայից
ու իր հովանու ներքոյ մեր ազգը միշտ, ընդ
միշտ կը մնայ հողով ու սրտով նուիրված ու
երախտալէս իր սիրելի Շահնշահին:

Ա. Յովհաննիսեան

ԿՈՏՈՐԱՅԻ ԵՒ ԹԱՆԱՅԻ ԶԱՓԸ

(Նամակ Երևանից)

Մինչև այսօր էլ Նախիջևանից և նրա շրջ-
ջականներից—կոտորածի և թալանի այդ վայ-
րից—շարունակվում են ստացվել մէկը միւսից
ստակալի տեղեկութիւններ, որոնք սակայն
դեռ ևս թւերի չեն վերածվել մօտաւոր պա-
ղափար կազմելու համար կորուստի և կարիքի
չափի մասին:

Ընդունելով միանգամայն, որ ստացված
տեղեկութիւնները առ այժմ շատ պակասա-
ւոր, հետեւապէս չափազանցութիւններով ու
թերութիւններով համեմատված կը լինին և ճիշդ
չափը որոշելու համար կարելու է լուրջ ընդ-
նութիւն, սակայն անհրաժեշտ գտնելով այժ-
րուան հետաքրքրութեան միջոցին գէթ մօտա-
ւոր չափ տալ, հէնց այն տեսակետից, որ գո-
նէ օգնութեան գործը կանոնաւորվէր կարելի
չափով, առաջ ենք բերում մեր մտացած տե-
ղեկութիւնները Նախիջևանից, մասամբ էլ
լրագիրներով հրատարակվածները ի նկատի
ունենալով:

Մարդկային զոհեր հաշւում են քաղաքում
39 սպանված, 5 վիրաւոր. Նոր Մահա գիւղում

1 կին այրված. Եւրոպայ գերազանց 1 վերաւոր. թիւը 17 սպանված, 7 վերաւոր (մէկը կին). Հաշիւարում (3 սպանված քաղաքում) 1 քահանայ սպանված և 1 երեսայ սրտաւար եղած. Ջահրում 50 սպանված և վերաւոր. վաճառ 20 սպանված և 100 անհետ կորած. ինքն ընդունելով միմիայն այսքանը, ուրիշն սպանված, վերաւորված և անհետ կորածների թիւը առ այժմ հասնում է մի խոշոր թւի, այն է 242 հոգու, չը հաշւած դեռ ևս Գարա-լագեալի և Ագուլիսի շրջանները, որտեղներում յամենայն դէպս սպանութեան և վերաւորման դէպքեր տեղի ունեցած կը լինեն կողոպուտ-ների հետ միաժամանակ:

Սակայն ի՞նչ չարքիքը սահմանափակվէր մարդկային զոհերով՝ էլի ոչինչ. բանը նրա մէջն է, որ կողոպուտն ու թալանի և մէկ գիւղից դէպի միւսը գաղթելը այնպիսի չա-փեր են ընդունել և այսօր այնպիսի բազմութիւն մնացել է զուրկ ապրուստի միջոցներից, որ մարդկային զոհերի պատճառած վիշաքը նսեմանում է հազարաւոր անմեղ գիւղացիների կանանց ու երեխաների կրած սարսափ-ների և զրկանքների առաջացրած վշտի դե-մաց:

Մինչև այժմ յայտնի եղած գիւղերը, որոնք ենթարկվել են թալանի և կողոպուտի և գաղ-թել են այլ գիւղեր պատապարկելու համար հետեւեալներն են. Եւրոպայ—137 տուն *, Կա-րախանքէլու 126 տ., Մամարզա Դիզա 48 տ., Նախիւ 35 տ., Թաւուր 238 տ., Հաշի-վար 57 տ., Գիւլիսի 122 տ., Գեարիմ բէկ Դիզա 22 տ., Ջահրի հայ և թուրք 596 տ., միմիայն հայեր ոչ պակաս 250 տնից, Կար-միր Վանք 30 տ., Արինջ 59 տ., Դարաբաբա 34 տուն, Մարզա 53 տուն, Նորս 136 տուն, Գժաճոր, Ջարգեղ Մազրա, Ու-ղունօբա գիւղերը նոյնպէս ֆրանսիական ու թալանված գիւղերից են, որոնց ընտա-նիկները քանակութեամբ չը կարողացանք իմանալ, բայց յամենայն դէպս 50-ական ըն-տանիքից բաղկացած կը լինեն. քաղաքը ոչ պակաս 250 տանից: Գուժարեղով այս թուե-րը, կը ստանանք 1747 տուն, որից ի՞նչ դուրս ձգելու լինենք 247 որպէս հայերի հետ խառն ապրող թուրքեր, այնու ամենայ-նիւ կը ստանանք մի խոշոր թիւ՝ 1500 տուն, որ ի՞նչ իւրաքանչիւր տուն հաշուելու լինենք միջին թուով 7 հոգուց բաղկացած, կընշանակէ Նախիւլեանի բարբարոսութիւնների և հալա-ծանքների ենթակայ 10,000-ից աւելի ժողո-վուրդ այսօր զրկված է որը ապրուստից, որը տանից ու տեղից, որը իր սիրելիներից և որն էլ մի ժամ հանգիստ առնելու և սար-սափները մոռանալու հնարաւորութիւնից:

Յիշակ գիւղերը մեծ մասամբ գաղթել են հարեան գիւղերը, գլխաւորապէս Շիւսանուդ և Գիւլբի:

Այստեղ մենք առաջ չը բերինք Գարալա-ղեալի մի քանի, ինչպէս և Ագուլիսի մի եր-կու գիւղերի մասին, որոնք ենթարկվելով թալանի, մեղ չեն հասել նրանց անունները:

Նախիւլեանից եկողները պատմում են, որ ի՞նչ քաղաքում կանոնաւոր խուզարկութեան-նեւ կատարվեն, հայերից կողոպուտած ազ-րանքների մեծ մասը հնար կը լինի դուրս բերիլ թուրքերի տնիքից:

Եկողները պատմում են Կարապետ վարդա-պետի ջանքերի մասին, որը մեծ եռանդով հանում էր ամեն տեղ, ուր կարէր կար, ան-տես առնելով նոյն իսկ անյայտ վտանգը:

Պատմում են նոյնպէս Թիֆլիսից ուղարկ-ված զինեալ Ալիխանով-Ալիարսկու, հէնց ե-կած օրից, ձեռք առած խիստ միջոցների մասին, որը շատ նպաստել է կարգի վերա-կանգնման գործին: Ասում են, նրա ներկայու-թիւնը հէնց առաջին օրվանից այլ կերպ կը դարձնէր այս գոթային գործը:

Եւթկ Երևանի քաղաքագլուխը—Մէլիք-Աղա-մալխան—վերադարձաւ Նախիւլեանից, ուր նա երկու անգամ ազատվել է սպանութեան փոր-ձից, մէկը գնդակի, միւսը սրի հարուածից:

Այսօր Նախիւլեանից հեռագրով յայտնել էին, որ ժողովուրդը ուղու է գաղթել. այս-տեղ եկողները հակառակ այդ մտադրութեան միջոցներ ձեռք առան կանգնեցնել այդ կորս-տաբեր միտքը: Նախիւլեանից դուրս գտնվող քաղաքացիների պարաքն է շտապել տուն, միմիայն յուսահատ ժողովուրդին և սիրտ տալ ու գործի հրաւիրել սարսափներից ճնշուած-ներին:

Ա—Դ

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՉԵՒԱՆԻՑ

Մայիսի 19-ին

Գիւղերից ստացված լուրերը օր աւուր ա-ւելի դառն ու կասկածելի են դառնում: Գիւ-ղերի մեծամասնութիւնը բարեբանդ է եղած: Սպանութիւնները շատ բաւ են:

Եկաւ Թիֆլիսից Շէյխ-ու-Խալալ, մի քանի գիւղեր շրջից, յուսադրեց հայ ժողովուրդին և մինչև անգամ երաշխաւորեց, որ այլ ևս ոչ մի անախորժ դէպք չէ պատահելու: Թէ որքան կերակրանաւան յարգելի շէյխ-ու-Խալալի դրա-կան խօսքերը՝ այդ ցոյց կը տայ մօտիկ ապա-գանք...

Եկաւ և նորընտիր գեներալ-նահանգապետ Ալիխանովը հարիւր կողակներին հետ: Ասում են՝ թէ դեռ շատ զորքեր են գալիս:

Թուրքերի մէջ խուզարկութիւններ դեռ չեն եղած: Հայերի ամբողջ հարստութիւնը թուր-քերի խառնութեամբ, տնեւում ու գիւղերումն է լցված: Բոլոր ապրանքներն ու կայքը թուրք գիւղեր ու Պարսկաստան անցկացրին ու թաղցրին:

Նախիւլեանի կան հաշիւարումները և Ե-րևանից մի քանի կին և տղամարդ բժիշկներ: Վաղվանից երեւի կը սկսեն վերաւորներին բու-ժել: Դարաբաբա վերաւորների և սպանված-ների թիւը թերեւ 110—120-ի հասնի: Նոյն-քան ևս Ջահուկ գիւղում կը լինի: Թաւու-րում մօտ 30—35 սպանված ու վերաւոր են: Կան բազմութիւ վերաւորներ ու սպանվածներ և ուրիշ շատ գիւղերում:

Անա ամբողջ 15 օր շուտով կը լրանայ, որ քաղաք չը կայ, հաց չը կայ, խառնութ չը կայ: Երևան հեռագրված է շուտով ալիւր հասցնել: Գիւղերը և քաղաքը ամբողջապէս թալանված են, ալիւր չեն թողել և մեծ սով է սպառնում: Թուրք աւազակ խուժանը թալանելիս ամենից առաջ հացն ու ալիւրն է տանում:

Երկաթուղու գծի վրա եղած հայ բանուր-ները ամբողջապէս դադարեցրին աշխատանք-ները և դէպի Երևան ճանապարհվեցին: Միայն այսօր հայերը բիսկ արին Նախիւլեանից դուրս գալ: Մինչև այսօր փակված Նախիւլեան էին մնացել: Ժամապարհների շատ երկիւղալի են: Այսօր, մայիսի 20-ին, հաստատում են, որ բռնկված է և Շարուրը: Այնտեղ ևս սկսել են թուրքերը հայ գիւղերի վրա յարձակվել:

Նոր հէնց լսեցինք (թէ ոչ պաշտօնապէս), որ Արաքսիցի միջին շրջակայքի հայ գիւղերի վրա յարձակում են գործի:

Գաղթականութեան մեծ հոսանք է նկատ-վում: Ժողովուրդը բոլորովին յուսահատ-ված է...

Սերբ

ՆԱՄԱԿ ՊԵՆՏԻՍՏՈՐՍԿԻՑ

Մայիսի 17-ին

Այս չար ժամանակներում, երբ մարդ չը գտնէ, թէ վաղը ի՞նչ համար ինչ է սպասվում և մտածում է միայն իր կենսի և գոյի ա-պահովութեան մասին, թողած ապագայի ծը-րագրերը, ապրում է ներկայով, Կովկասեան հանքային շրերի վարչութիւնը ժամանակ է գտել հեռագրելու մայրաքաղաքի թերթերին, թէ հանքային շրերում հանգստութիւն և ան-դորբութիւն է տիրում, նոյն իսկ Բագուի և Երևանի սպանութիւնների ժամանակ այն տե-ղիքից եկած մարդիկ այստեղ են ապաստա-րան գտել, եկէք հիւանդ և առողջացած կը վերադառնաք: Չը նայած այս իր տեսակի բնկալին, դարձեալ եկողներ չը կան: Մինչև այսօր 250-ի չափ մարդ քաղաք մտած կը լի-տեն, նրանք էլ մեծ մասը բժիշկներ, առե-տակարաններ, գործ ուղևորներ և վերաւորված ու հիւանդ զինուորականներ են: Թէ սկզբից նշանները ցոյց են տալիս, որ այս տարվայ կուրսը վատ պիտի լինի, սակայն տնտեսները չեն յուսահատվում, սպասում են ամառվայ ամիսներին և չեն ուղուց պակասացրած լինել տնեւի վարձը: Նրա քաղաքներով մինչ այն անտեղի շատ է, որ խոհանոցն անգամ սե-նեակի տեղ են ուղուց վարձով տալ, այն է՝ ամսական 10—15 ռուբլի:

Այստեղի տնտեսների մեծամասնութիւնը ուռններ են, որոնք Ռուսաստանի զանազան տեղերից գաղթել և հաստատվել են այստեղ: Բաղադր տարեց տարեւ ընդարձակվում է և շի-նութիւնների թիւը շատանում: Երկաթուղու կայարանից սկսած դէպի Էսսէնտուկի տանող ճանապարհի գծի վրա շինութիւններ է, որ շինվում են: Եթէ այդպէս շարունակվի, երկու տարուց յետոյ քաղաքը միացած կը լինի Էս-սէնտուկի հետ: Տեղական բնակիչների հետքն անգամ չը կայ. ոչ չէն, ոչ ինքուր, ոչ կա-բարդիներ չեն երևում:

Թէ և Կովկասեան հանքային շրերի վարչու-թիւնը աշխատում է համոզել, թէ այստեղ հանգստութիւն է տիրում, սակայն այստեղի ծառերի տերեւները ևս սկսել են ձայն հանել: Անցեալներում գործախառնները գործադու-արին, և այժմ կիրակի օրերը խանութները բոլորը փակում են, այս քանի օրերս էլ լա-քէյնեհն են գործադուլ արել և իրանց պա-հանջներն են անում ճաշարանատէրերից և հիւրանոցատէրերից: Գանի օր է, որ բոլոր արհեստաւորները ժողովվում են միասին և ի-րանց կարիքները և հոգսերը մասին են մտա-ծում: Հայ քաղաքացիներն ևս հրաւիրել են մասնակցելու այդ ժողովներին, որոնք թիւը այստեղ շատ է և գրեթէ բոլոր քաղք գործը նրանց ձեռին է, բայց նրանք ասել են՝ չենք մասնակցիլ ձեր ժողովներին, սակայն ինչ որ որոշէք, ձեզ հետ մենք ևս համաձայն ենք: Նրանց այդ տեսակ պատասխանը, ի հարկէ, առանց պատճառի չէ...

Բաղադրի եկամուտը տարեց տարեւ կրկնա-պատկվում է, և դեռ քաղաքային վարչութիւ-նը մտածում է նոր-նոր եկամուտների աղ-բերների մասին: Սակայն քաղաքային խոր-հուրդը, որի անդամներն մեծամասնութիւն կօ-կորդաւորներ են և մոնղոլներն, չեն ու-ղում չունենող դատակարգի համար էժանագին բնակարաններ շինելու վրա գլուխ ցանկցնել: Պարզ է, որ տնտեսի համար էժանագին բը-նակարանը այնքան ձեռնտու չէ. իսկ ձայնա-ւորների մեծամասնութիւնը տնտեսներն են: Նրանց ապրուստի միակ աղբիւրը աներն են, որ ամսո ժամանակը լաւ վարձ են տալիս:

Ա. Բարուկչեան

ՆԱՄԱԿ ԱՆԻՐԿԱՍՏՈՐՍԿԻՑ ԵՐԿԻՐԻՑ

Տէրմէզ, մայիսի 10-ին

Տէրմէզը Անդրկասպեան երկրի ուսանական զօրիգ բերդերից մինն է Աւղանտանի դէմ: Սա գտնվում է Ամու-Դարիայի ալ Կիւն Զար-լուրից 433 վերստ հեռավորութեան վրա: Գիւ-րից դէպի Տէրմէզ 60 վերստից յետոյ գետի ձախ ափով վերջանում է բուխարական հողը և սկսվում է Աւղանտանի սահմանը, այն-պէս որ այնուհետև մինչև Տէրմէզ և աւելի վերև Ամու-Դարիայի ալ ափը բուխարական սահմանն է, իսկ ձախը աւղանական: Ամու-Դարիայի վրա բանող ուսանական նաւատորմի նաւերը գնում են գետի աջ, այն է բու-խարական ափով: Աւղանական սահմանը սկսվելուց յետոյ գետի բուխարական ափի վրա իւրաքանչիւր 12—15 վերստ տարածու-թեան վրա գտնվում են ուսանական սահմանա-պահ պահակախմբեր, որոնցից ամենամեծը գտնվում է Բէլիք գիւղում. այդտեղ շոգենա-ւերը կանգ են առնում 10—15 րօպէ:

Բէլիքում նստում է և բուխարական բէկը կամ նահանգապետը: Գիւրիցից մինչև Տէրմէզ գետի երկու ափերն ևս ներկայացնում են մեծ մասամբ հարթ կանաչ դաշտավայրեր տեղ-տեղ բնիկների խցճուկ բնակարաններով ծածկ-ված, տեղ-տեղ էլ կտրատված լեռնաշղթա-ներով, որոնց մէջ երևում են նոյն իսկ բարձր ձիւնապատ գագաթներ: Ամու-Դարիայի շուրջ մասնաւոր գարնան այնքան վարարում է և շատանում է ջրի ընթացքը դառնում է այն-քան ուժեղ, որ խանգարում է շոգենաւերի առաջ գնալուն ջրի հոսանքին հակառակ և շո-գենաւերը այդպիսի տեղերում մի ժամում 1—2 վերստից աւել չեն գնում:

Տէրմէզը նոր քաղաք է, աւելի ճիշդ բեր-դաքաղաք և թէ և գտնվում է Բուխարայի խոր-քում, սակայն նա ուսանաց կառավարութեան սեփականութիւնն է, որովհետև Ռուսաստանը քաղաքի տեղը գնել է Բուխարայից: Հին բու-խարական քաղաքը կոչվում է Պատտա-Հիսար, որի բնակիչները մեծ մասամբ սարթեր են: Սա իրեն հին քաղաք բուն ասիական քաղաքի տպաւորութիւն է թողնում և իր ծուռ, ան-կանոն և փոքր փողոցներով և ասիական տներով շատ նման է բուխարական այլ քա-ղաքներին: Այստեղ ապրում են 8—9 ընտա-նիք հայեր, որոնք բոլորն էլ պարսպաւ են առեւտրով:

Հին Պատտա-Հիսարը այժմ աւերակ է. նա գտնվելով Բուխարայի և Աւղանտանի սահ-մանում և միւս կողմից էլ Հնդկաստանի սահ-մանի մօտ, ընկնելիս է եղել այն կարաւանա-յին ճանապարհի վրա, որով հին ժամանակ-ներում անցնելիս են եղել Պարսկաստանից Աւղանտանի վրայով դէպի Հնդկաստան: Ա-սում են, որ Ալեքսանդր Մակեդոնացին ևս նոյն ճանապարհով է արշաւել Հնդկաստան և Պա-տա-Հիսարի մօտ իր զօրքը Ամու-Դարիայի միւս կողմը անցկացնելու համար շինել է ժա-

մանակաւոր կամուրջ: Նոյն իսկ ներկայումս ուսանական պատերազմը սկսվելուց յե-տոյ հնդիկ վաճառականները, օգտվելով սրբի-րական երկաթուղու և ուսանաց շոգենաւերի թանգութիւնից՝ ուղտերի վրա բարձած մի քանի հազար պուռ թէյ են բերել Հնդկաս-տանից նոյն կարաւանային ճանապարհով Աւ-ղանտանի վրայով Բուխարա և աւելի էժան վաճառել են, քան թէ Չինաստանից եկող թէյը:

Աւղանտանի և Ռուսաստանի յարաբերու-թիւնները լարված լինելու պատճառով Աւ-ղանտանի կառավարութիւնը չէ թող տալիս ոչ մի ուսանական ապրանքի անցնել իր սահմանը և այստեղ ևս ոչ մի ուսանական չէ կա-րողանում անցկենալ ջրի ձախ ափը, սակայն բուխարացիները և աւղանցիները ազատ գա-լիս գնում են: Երկու կառավարութիւնների այդ լարված դրութիւնը ստիպել է Ռուսաս-տանին որքան կարելի է ամրացնել և ուժե-ղացնել Աւղանտանի դէմ գտնվող այս միակ բերդաքաղաքը: Ներկայումս Տէրմէզում կայ 4 բաւալիսն ուսանական զօրք, 100 կռակ, շինված են մի քանի մարտկոցներ:

Տեղական գնդի մէջ կան 4 հայ սպայ և մօտ 210 հայ զինուորներ, մեծ մասամբ Երևանեան նահանգից: Ամսիս 8-ին հայ զինուորների հա-ղորդութեան առիթով Պատտա-Հիսարի փոք-րաթիւ հայ գաղութը մի համեստ ճաշ էր պատրաստել հայ զինուորների համար: Նոյն օրը տեղիս ժամանակաւոր աղօթատան գաւ-թում տեղիս հայ համայնքի և զինուորների ներկայութեամբ կատարվեցին հոգեհանգիստ-ներ Բագուի զոհերի և Գիւստափոր Միքայէ-լեանցի յիշատակին:

Ներսէս Բաշանայ

ՆԱՄԱԿ ԽՐԱՐԱՐՈՒԹԵԱՆ

Շէյքի, մայիսի 17-ին

Յէնգուրից թոյլաւորված, տպագրութեան համար պատրաստի ունենալ «Պատկերներ»-իս I հատորը, որի տպագրութեան համար, սա-կայն, չունեն Նիւթական միջոցներ:

Ուստի, գրեթէ ձեռնհաս անձանց, խնդ-րում եմ, դրեալ տպագրութեան համար պարտք տալ ինձ 3—4 հարիւր ռուբլի, ամենաուշը մի տարի ժամանակամիջոցում որոշ տոկոսով յետ ստանալու պայմանով: Իբրեւ դրաւական կարող եմ տալ միայն տպագրվելիք գրքիցս որոշ քա-նակութիւն:

Հասցէ՝ Գոր. Шатры (Бурской губ.), Быв-шему учителю Казарову Тер-Григорьянцъ. Ջաւախցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» այսօրվայ համարը բողկացած է 1½ թերթից:

Մայիսի 22-ին Կովկասի փոխարքայի զին-ւորական մասի օգնական գեներալ-էյտնտնտ Մալաման շրջանական ինտենդանտ գեներալ-մայոր Ազապետիկ հետ միասին նայում էին, ի միջի այլոց, կողակարական պետական ար-հեստանոցը, ուր բոլոր մեքենաները բանեց-նում էին: Այդ ժամանակ մի զինուոր, ցանկա-լով շարժիչ կաշին մեծ անիւից անցկացնել անշարժ անիւի վրա, փայտով փորձում է բարձրացնել կաշին, բայց շարժվող կաշին մեծ ուժով խում է փայտը և շարժում: Փայ-տը կպչում է գեներալ Ազապետիկի գլխին, իսկ կաշին խփում է գեներալ Մալամայի գլխին: Երկու գեներալներն էլ թեթեւ վէրք են ստա-ցել զրանից:

Ժողովրդական լուսաւորութեան միմիայնութեան մէջ նորից հարց է յարուցված միջնա-կարգ դպրոցների ծրագրից բոլորովին դուրս հանել յունարէն լեզուի ուսուցումը:

Թիֆլիսի էլէքտրաքաղաքի վրա հսկող յանձ-նաժողովը, լսելով գեներալ Չերեանի զանա-զատը, վճռեց վատման Դեկանոսովին ենթար-կել 5 ռուբլի տուգանքի, վերջինիս էլէքտրա-քաղաքը անգորշ կառավարելու պատճառով, որի հետեւանքն էր ճանապարհորդների սաս-տիկ երկիւղը և ցնցումը:

Այն յանձնաժողովը, որ հսկում է էլէքտրա-քաղաքի վրա, լսելով յանձնաժողովի անդամներ Գուլաձէի և Ալիխանեանի յայտարարութիւն-ները, վճռեց խնդրել Անտոն ընկերութեան տեսչին, համաձայն վերջինիս հետ ունեցած մասնաւոր համաձայնութեան, բաց թողնել լրացուցիչ վագոններ, որովհետև ամառվայ պատճառով երթեկները սաստկացել է և

*) Այս թուրք վերջերի ենք. Памятная книжка Эрив. губ. на 1902 г. պաշտօնական հրատարակութիւնից:

ժողովուրդը շատ անյարժարութիւններ է կրում:

Շուշուց ստացանք հետեւեալ հեռագիրը մայիսի 26-ին. «Յուզիչ լուրերը սուտ են: Շուշուում լիակատար խաղաղութիւն է»:

«Ի. Խ.» լրագիրը հաղորդում է, որ ծովապետ Ալեքսեւիլը մայիսի 18-ին ժամանել է Յարսկոէ-Սելո և ֆինացի աշտեղ մինչև ուշ գիշեր: Լուրեր են պատում, որ այդ այցելութիւնը կապված է բարձր շրջաններում մեծածափով խաղաղութիւնների հետ:

Թիֆլիսի քաղաքային մար խանութները անցեալ 1905 թիւին ֆինաս են արել 15,860 ռուբլի, իսկ նախընթաց տարում ֆինաս են ունեցել 37,555 ռուբլի 19 կ.: Այդպիսով ընդամենը քաղաքը իր մար խանութներից ֆինաս է ունեցել բացվելու օրից մինչև ներկայ 1905 թիւի յունվարի 1-ը 53,415 ռ. 56 կ., իսկ ներկայ 1905 թիւականի յունվար և փետրվար ամիսներում ֆինասվել է քաղաքը խանութներից 647 ռ. 94 կոպէկ:

«Բ. Ը.» լրագրին հեռագրում են Պետտի-գորսկից, որ աշտեղ ձերբակալեցին մի թուրքի, որը Բագու էր ուղարկում մի արկղ, որի մէջ, բաց անելով, գտան 5,000 պատերազմական փամփուշտ:

Նիժ գիւղից (Նուխու գաւառ) մեզ գրում են. «Երէկ, ամիս 19-ին, թրքաւան Փաղառ գիւղի քաղաքից վերադառնալիս (Փաղառը գտնվում է Նիժից մօտ 7-8 վերստ հեռավորութեան վրա) Մինչև նոյնպէս թրքաւանի գիւղի մօտ անյայտ չարագործների ձեռքով սպանվեց հրացանի գնդակով սայլի մէջ Նիժ գիւղացի Դադաշ Վեդիքեանց մօտ 50 տարեկան հասակում: Սպանվածի հետ սայլի մէջ են եղել նրա որդին և մի ուրիշ նիժիցի, որոնք, բարեբաղդաբար, անֆինաս են ֆինացի: Սպանվածը բերված է գիւղ, ինչպէս և կրակ գիւղացիներից մէկն է եղել: Տարօրինակ սպանութիւն, որը ոչ մի պատճառ չունի: Կարծես մի խաղ է: Դործը ընդունում է»:

ՂԱԶԱՆԻՑ մեզ գրում են. «Հին-Նախիջևանի դարհուրիի դէպքերը այստեղ շատ վատ ապաւորութիւն թողին: Նիժիցի Վեդիքեանցի ձեռք ձեռքից են որ և է թիւրքաւանութեան առաջն առնելու համար: Շուրհիւ մի քանի անձերի և հայր Ապրիսեանի ձեռք առած միջոցների, խաղաղութիւնը մեղանում վատահիւ է: Մի նամակով ասէր հայրը դիմել է գաւառիս գիւղական հասարակութեան, խնդրելով, որ սար գնացող թուրքերին ազատ թողնեն և ճանապարհներում ոչ մի տեղ արգելք չը հանդիսանան»:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

25 մայիսի

ՎԼԱԴԻՄԻՐ ՍՈՒՅ, 24 մայիսի: (Սել. թղթ.): Շարունակութիւն: Երբ հրաձգութիւնն սկսվեց, «Բեդովին» կանգնեց և բարձրացրեց Կարսի ծախի զրօշակը, որից յետոյ «Գրօշին» արագընթաց մեկնեց հիւսիս: Ենթադրեալ հակա-ականաւար մօտեցաւ «Բեդովին»: Ասում են, որ տեսել են թէ ինչպէս մակոյկը մօտեցաւ «Բեդովին», իսկ յետոյ յետ գնաց: Լսեցին պայթիւն, բայց ենթադրեալ նաւը գրաւել էր բոլորի ուշադրութիւնը, այդ պատճառով չը կարողացան հաստատ իմանալ, թէ արեւօք ընկնում է «Բեդովին»: 22 կարելւոսի վրա սկսվեց հրաձգութիւն: Յետոյ մօտեցան իրար 12 կարելւոսի և այդպէս ընթացան մօտ 1 ժամ: «Գրօշին» վրա ընկան 10 ուռմբ: Յոյացուցիչի կամրջակի վրա ընկնող ուռմբն սպանեց միջմանին, 2 նաւաստիներին և վերաւորից նաւապետին ու ղեկավարին: «Գրօշին» մի աշող հարուածով խփեցին ենթադրեալ նաւի ընդ կաթարին. դրանից խոչընդոտվեց թուրք: Մի քանի ուրիշ աշող հարուածներից յետոյ ենթադրեալ նաւն սկսեց զօրեղ շողի արձակել, ծովից, ընթացող աւազի շուրջ և համարեա վարկենարար սուզվեց: Զօրեղ փոթորիկը և ածուխի պակասութիւնը խանգարեցին մեզ մօտենալու նրան: Ածուխ չը կար: Վառեցինք փայտէ մասերը և կարասիները: Ամբողջ գիշերը նկատում էինք հրաձգութեան փայլեր և ցոլացուցիչներ ճառագայթներ: Մինչև այժմ ոչ յոյս չկար զուգար չէ գալիս անաշուղտութիւնից: Բոլորն ընթացում էին վատահ յաղթութեան վրա: Լաւա-

դոյն դրահակներին արագ կորուստը, փոխադրանքների ներկայութիւնը, որ սաստիկ զոհաբերեցում էր մեր շարժումը, գլխաւոր հրամանատարութեան ուրիշին յանձնելը, աշտեղները, ենթադրեալ նաւերի կապուկա-նաշագործ և մոխրագործ ներկած լինելը, որ թագցնում էր նրանց, բացատրում են պարտութեան պատճառը: Անձնատուր լինելը այստեղ բոլորին զարմացրեց: Ոչ ոք չէր կարող այդ նիժիցիներին: Ուշերը որ գիտէին այդ նաւերի կօմանդաների, օֆիցէրների ու զինւորների կազմը, աւելի ևս զարմանում են:

ԲԵՐԼԻՆ, 24 մայիսի: Կոմս Բիւլովին շնորհված է իշխանական տիտղոս: Կայսրն անձամբ ժամանեց կանցլէրի պալատը և յայտնեց բարձրագոյն շնորհի մասին: «Կեռնիշէ ծայրաւոր» հաղորդում է, որ ֆրանսիական կառավարութիւնը պատուիրեց Պետերբուրգի իր դեսպանին հասկացնել տալ ուղևաց կառավարութեանը, որ Ֆրանսիան պատրաստ է միջնորդ հանդիսանալ խաղաղութեան դաշն կապելու ժամանակ, եթէ այդ համապատասխանում է Ռուսաստանի դիտաւորութիւններին: Մինչև այժմ պատասխան չէ ստացված: ՎԱՇԻՆԴՏՈՆ, Ծովապետ Էնկվիստին կը թոյլատրվի բաւարար քանակութեամբ ածուխ վերցնել Վաշինգտոնի համայնու համար:

ՄԱՆԻԼԱ, 24 մայիսի: «Աւրօր» կրէյսէրի ղեկի ապագարտը փչացած է: Նաւերի դուրս գալու ժամանակը յետաձգված է: «Ժէմէյու» նաւին կը արվի 150 տօնն ածուխ, իսկ «Աւրօրային» 200: «Օլէգ» նաւը աշտեղ է ֆինասված, որ վտանգաւոր է նրա ծով դուրս գալը:

ՏՕԿԻՕ, 24 մայիսի: Ծովապետական «Միկադա» նաւը կուի մէջ նշանաւոր ֆինասուածքներ ստացաւ, բայց ներկայումս պատրաստ է գործելու: «Միկադայի» վրա վերաւորված են 16 օֆիցէրներ: Ծովապետ Տօգօ իր զրահակով մօտենում էր ուղևական նաւերին աւելի մօտ ենթադրեալ ընդ որ ուրիշ նաւերից: Վերադառնալով Սասէր, Տօգօն հրամայեց օֆիցէրներին և կօմանդաներին չը հեռանալ նաւից և ինքը ծովապետը ափ չիջնու մինչև մայիսի 20, երբ գնաց այցելելու ծովապետ Ռօժմուլինսկուն: Այն ժամանակ, երբ ենթադրեալները տանում էին «Օրեոլ» զրահակը, տասը ուղև մեխանիկներ պայմանաւորվեցին պայթեցնել վառարարներ: Մայիսի 15-ին նրանք այլովոր նիւթ դրին նաւի ընդ տակ գտնվող փամփուշտներին իրենցայալով: Երբ ենթադրեալները երևան հանեցին այդ փորձը, սաստիկ յուզմունք սկսվեց: Դաւադրութեան ութ պարս ղուլներին ենթադրեալները հրացանազարկ արին: Նաւը բերված է Մայցուրու: 12 նաւաստիներ, որոնք սաստիկ տանջվում էին վէրքերից, խնդրեցին ընկերներին սպանել իրենց: Նրանց նաւից գցեցին ծովը, և նրանք խեղդվեցին: «Օրեոլ» նաւի հրամանատարը վախճանվեց նաւի վրա Մայցուրու գալուց կէս ժամ առաջ: Պաշտօնապէս հաղորդվում է, որ տեղի ունեցած ծովային պատերազմի մէջ գործ էին ածվում ստորջրեայ նաւակներ:

ՇԱՆԻՉԱՅ, 24, մայիսի: Ենթադրեալ երկու հակաականաւար սպանվում են Վուդուուում: Կարծում են, որ գնեցին Միչչէնկօ հեծելազօրի մեծ զօրաբաժնով գտնվում է Շէնչիա-տունից դէպի արևելք Չանչուում և Ֆէնխտա տանող ճանապարհները պաշտպանելու համար, որտեղից ուղևները ստանում են մթերքներ: Ռուսական չորս օժանդակ կրէյսէրներ և մի մեծ կրէյսէր մայիսի 22-ին գտնվում էին Ամոյի մօտ:

ՏՕԿԻՕ, 24 մայիսի: Պատերազմ ծագելու օրից ենթադրեալ հիւանդանոցներում մեռել են 120 ուղև գերիներ, իսկ Պօրտ-Արտուրի և Դալին քաղաքի հիւանդանոցներում—մինչև 1400 մարդ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Մայիսի 25-ին Պետերբուրգի գնեցին նախնադապետը քաղաքաւորութիւն ունեցաւ անձամբ մատուցանել Նոցա Միծու-թիւններին Պետերբուրգի բնակիչներին շնորհաւորութիւնը թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Ֆէոդորօվնայի ծննդեան օրվայ առիթով: Նոցա Միծութիւնները հրամայեցին շնորհակալութիւն յայտնել մայրաքաղաքի բնակիչներին մատուցած շնորհաւորութիւններին և յայտնած բարեմաղթութիւններին համար:

ՆԻԻ-ԵՕՐԿ, 25 մայիսի: Էնկվիստի նաւերը երկու կը կանգնեցնվին Մանիլայում, որովհետև աւելիկական կառավարութիւնը վախեցնում է ստեղծել թիւրքաւորութիւններին եթէ թոյլատրէ ուղևներ նաւերին մեալ ֆլուսավազները կարկառելու համար: Կառավարութիւնը պատճառաբանում է իր գործունէութեան եղանակը նրանով, որ ոչ թէ փոթորիկը, այլ կուի հետևանք եղող հանգամանքները ստի-

պեցին նաւերին ապաստան որոնել, նոյնպէս և նրանով, որ կրէյսէրների կարկառումը կը պահանջէ 69 օր:

ԽՐԻՍՏԻԱՆԻՒՄ, 25 մայիսի: Ստորախնդը գահնկեց արաւ թագաւորին, յայտարարեց Նօրվէգիայի անկախութիւնը, որը պահանջում է, որ Նօրվէգիայի թագաւոր յայտարարվի շվեդական արքայական ընտանիքի կրտսեր պրէնցերներից մէկը:

ԲԱՌՈՒՄ, 25 մայիսի: Կողոպտված է «Մէս-սաթէրի Մարտի» շոգենաւի ընկերութեան գրասենեակը: Տարել են 1200 ռուբլի: Կողոպտողները անհետացան:

ԲԵՐԼԻՆ, 24 մայիսի: Կէսօրից յետոյ 4 ժամ 30 րոպէին կայացաւ գերմանական թագաժառանգի պաակադրութիւնը պրինցուհու Յէյն-լիայի հետ: Պաակադրութեան ծէսից յետոյ կայացաւ շնորհաւորութիւնների հանդէսը, և ապա հանդիսաւոր ճաշ: 9 ժամ 30 րոպէին նո-րապաակները ճանապարհ ընկան Հոլլանդիա-տակ մարդը:

ԼՕՆԴՈՆ, 25 մայիսի: Բարի դիտաւորութիւններով համարված շատ անձինք շարունակում են ազիտացիա անել ի նպաստ խաղաղութեան, բայց մինչև այժմ չէ նկատվում էական աշողութիւն: Երէկ կայացաւ պարլամենտական առեւտրական կօմիտէի ժողով համայնքների ժողովի բաղաժիւ անդամների ներկայութեամբ: Ընդունվեց որոշում, որով միջնորդում են անգլիական կառավարութեան առջ քայլեր անել ի նպաստ խաղաղութեան: Այդ բանն արված է ֆրանսիական պատգա-մաւորների ժողովի մի խումբի առաջարկու-թեան պատճառով: Դէ-Տուրնէլը Կօնստան-ցանկութիւն յայտնեց, որ երկու որոշումներին ևս միացվին և միաժամանակ ներկայացվին ֆրանսիական և անգլիական կառավարութիւններին, պահանջելով գործողութիւններ սկսել խաղաղութիւն կապելու վերաբերմամբ Ռուսաստանի և ենթադրեալ միջև: Անգլիական որոշումը յանձնված է Բալթիկին: Նրա բնա-գիրը հեռագրված է բարոն Կօնստանին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Գնեցին ազիտացիա Ռօժմու-վինսկու ամենահայտնի հեռագիրը, որ ուղարկված է Տօկիօից 1905 թիւի մայիսի 24-ին 11 ժամ 30 րոպէին: «Մայիսի 14-ին ցերեկ-վայ 1 ժամ 30 րոպէին Ցուսիմա կղզու հարա-ւային ծայրի և Ենթադրեալ միջև կուի սկսվեց ենթադրեալ գլխաւոր ոյժերի հետ, թուով 12 նաւեր և ենթադրեալ կրէյսերներ հետ, թուով ոչ պակաս 12-ից: 2 ժամ 30 րոպէին «Սուվօրով» նաւի վրա... (?) Վարչութիւնը ստիպվեցանք տեղափոխվել կենտրոնական պահակի վրա, իսկ 3 ժամ 30 րոպէին շտա-բի մի մասը և ինձ, որ կորցրել էի գերադասու-թիւնս, նստեցին «Բուչիլի» վրա, ուր էի ար-դէն խորտակված «Օսկարիայի» էնկլաւի մի մասը: Հրամանատարութիւնը յանձնվեց Նե-րօզաւորին: Գիշերը «Բուչիլին» կորցրեց էս-կադրան: Առաւօտեան տեսանք «Դօնաւոյ» նա-ւը երկու ականանաւորով: Ինձ տարան «Բե-դովին» նաւը, որը շարունակեց ճանապարհը «Գրօշին» հետ: Երեկոյեան, մայիսի 15-ին, իմացալ, որ «Բեդովին» նաւը անձնատուր եղաւ ենթադրեալ երկու ականանաւորին: «Բե-դովին» նաւը բերվեց Սասէր: Մայիսի 18-ին ծանուցվեց որ Նեքօգաւոր գտնվում է «Սա-սէրում»:

26 մայիսի

ՊՕՍ ԿՕՐՄԱԿՕՎՍԿ (Մախալին), մայիսի 21-ին: Ներկայ տարվայ ընթացքում հեռացան աւելի քան 2000 քաղաքականներ: Դրա պատ-ճառը անցեալ տարվայ անբերրութիւնը, թան-գութիւնը, հացի և աշխատանքի պակասու-թիւնը, սպանութիւնները և գողութիւններն են: Ենթադրեալ ձկնորս յափառակիչները գալիս են նաւակներով Մախալինի ափերի մօտ, զի-նաւորված դիմադրութիւն ցոյց տալով մեր զօրաբաժնիներին: Հրացանաձգութիւն կար: Սպանվեցին 5 ենթադրեալներ:

ՄՕՍԿՎԱ, 25 մայիսի: Երէկ երեկոյեան 500 հոգուց բաղկացած ուսանող երիտասարդու-թեան մի խումբ Տվէրսկայա գաւառակայից գնաց դէպի քաղաքապետի տունը: Ուստիկ-նութիւնը և ժանդարմները ցրվեցին ամբողջ: Մօսկվայի համալսարանի կրտսեր դասաւորու-թիւնը վճռեցին չընդունել պրօֆէսորական տեղեր, եթէ նրանք թափուր կը մնան աշխարհ պրօ-ֆէսորներին արձակելու պատճառով:

26 մայիսի

ԳՈՒՆԶՈՒՆԻՆ, 25 մայիսի: Մայիսի 21-ին բերված է գնեցին Միչչէնկօ արշաւման ժա-մանակ գերի ընկած ենթադրեալների երկրորդ խումբը: Գերիների թուում կան հինգ օֆիցէր: Հետաքրքիր փաստեր են պատմում ենթադ-րեալ գերի օֆիցէրները այն մասին, թէ ին-

չու են արագ և յարմար իրանց յարձակու-թիւն: Նրանց խօսքով, նրանց օֆիցերները վաշ-տերի առկից չեն գնում, այլ հոսկից, գնում են ընկողնների ձեռքերին և զարկում սպա-նում շուռ եկող իւրաքանչիւր զինուորի: Բա-տալիօնների հրամանատարները գնում են բատալիօնի հետեւ և կրակում են իւրաքանչիւր նահանջողի վրա, ի բաց չառնելով և օֆիցէր-ներին: Այդ կարգը բատալիօնի հրամանատա-րից բարձր չէ գնում: Գերի վերցրված վաշտը պատկանում է Նօգիի բանակին: Օֆիցէրները պատմում են, որ Պօրտ-Արտուրի մօտ երկու վաշտ յարձակման ժամանակ երկու անգամ շուռ էին գալիս, այն ժամանակ Նօգի թողեց նրանց անցնելու բատալիօնի առկից և բոլո-րին հրացանաւորակ արեց: Այն հարցին, թէ ինչ պարզ և ստացաւ Նօգի Պօրտ-Արտուրը վերցնելու համար, օֆիցէրները պատասխանե-ցին, թէ ոչինչ, ինչպէս և ոչ ոք մեղանից: Մենք ներկայացված ենք—թէ ինչ պարզե-լը գիտենք: Պարզեցին կը ստանանք պատե-րազմից յետոյ, երբ մեր գործը կանխք: Այս-տեղ փոփոխութիւններ չը կան:

ՏՕԿԻՕ, 25 մայիսի: Ճիշդ չէ այն տեղեկու-թիւնը, թէ ծովապետ Ռօժմուլինսկին հիւանդ էր դեռ մինչև կուի: Երբ ծովապետը քրոջ որդին թոյլաւորութիւն խնդրեց խնամել վերա-ւորներին, ենթադրեալ իշխանութիւնները միջոցներ կատարել նրա խնդրը, վախենա-լով, որ ազգակալութիւնը ներկայութիւնը վատ կազմէ առողջանալու ընթացքի վրա: Ենթա-դրեալները հարցրին Ռօժմուլինսկու կարծիքը այդ հարցի առթիւ: Նա պատասխանեց, որ ամենին չէ գրում թէ գտնվում է թշնամու երկրում: Գլխաւոր բժիշկը անձամբ հսկում է կերակրի պատրաստութեան վրա ծովապետի համար:

ՄԱՆԻԼԱ, 25 մայիսի: «Դէլի Մէլ» հաղոր-դում է հեղինակաւոր աղբիւրից, որ ուղևական նաւերը զինաթափ կը լինեն:

26 մայիսի

ՀՕՆԳՅՈՆԻ, 25 մայիսի: Ռուսները բռնած բրիտանական շոգենաւի աւագ օֆիցէրը յայտ-նում է, որ ուղևական «Դնէպը» կրէյսէրի էնկլաւը հրաժարվեց հաւատարու Ռօժմու-վինսկու պարտութեանը: Կապիտանը շարու-նակում է երթեկեկ Ֆորմօզայի և Ենթադրեալ միջև հետամուտ լինելով ենթադրեալ նաւա-հանգիստները կօնտրաբանտ տանող շոգե-նաւներին:

ՏՕԿԻՕ, 23 մայիսի: Պաշտօնական: Ենթա-դրեալները դուրս մղեցին ուղևներին Շախվէ-գիից տուր մղոն դէպի արևելք Չանտուֆուից և գրաւեցին աշտեղ կայարանը: Յետ են մղված նոյնպէս հեծելազօր պահակները հարե-ւան բարձրութիւններից: Հեծելազօրը յետ մղվեցին Սանգրեպից ութ մղոն դէպի ա-րևուտը Մադիօնից, նոյնպէս է Մադիօնից-և այդ երկու տեղերը գրաւված են ենթադ-րեալներին:

ՏՕԿԻՕ, 25 մայիսի (Լօնդօնի վրայով): Վեր-ջին փաստերի համեմատ, ուղև գերիների թիւ-ը հասնում է 6142-ի, այդ թուում 137 հոգի ոչ զինուորականներ, որոնք կարճակիւն: Բացի դրանից 69 հոգի, որոնք թուում քահանաներ և բժիշկներ, ազատ բաց են թողել: Բռնված ուղևական նաւերը մկրտվեցին հետեւեալ ա-նուններով. «Օրեոլ»—«Եվամի», «Կայսր Նի-կօլայ 1»—«Դիկ», «Գնեցին-Ավարալ Ապ-րակին»—«Օկիօնիմա» և «Ազմիւրալ Սնեհա-վին»—«Միչիմա»:

ՇԱՆԻՉԱՅ, 25 մայիսի: Ենթադրեալ հակա-ականաւար Շանչիայից գնաց Տօկիօ—«Դե-լի Տէլէգրաֆ» լրագրի թղթակիցը իմացաւ, որ ստորջրեայ նաւակների գործողութիւնները կուի ժամանակ անհետանք մնացին սաստիկ ալեկոծութեան պատճառով:

ՊԱՐԻՉ, 25 մայիսի: Ծովային բարձրագոյն խորհուրդը եկաւ այն հզորակացութեան, որ հակա-ականաւարներ թիւը պէտք է մեծացվի նշանաւոր չափով: Ֆրանսիական մամուլը միաբերան գովում է Դէլիայի հրաժարակա-նը, որովհետև նրա քաղաքականութիւնը ան-զգայն և վտանգաւոր էր Ֆրանսիայի հա-մար: Մարօկօի սուլթանը ընդունեց Լօն-տէրին, անգլիական միսիոնարի հրամանատա-րին: Սերբիական արքայադատութեան մի-նիստը Նիկօլիչ հրաժարական տուեց:—25-ը, նօգործական իշխանը Շէնչուրուում տեսա-ցութիւն ունեցաւ Ֆրանց Յոլմէի կայսրի հետ: Միջազգային երկրագործական ինտեր-տուտը կը գտնվի Հոմում: Թագաւորը ան-ձամբ 300,000 լիւրա յակացրեց տարեկան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Գլխաւոր ծովային շտաբը յայտարարում է, որ ենթադրեալ ստացված

